ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2026 թվականի N 1195-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1959-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Ղարաբաղից տեղահանված առանձին խմբերի ընտանիքներին կացարանով ապահովման համար վարձակալության վարձավճարի մասնակի հատուցման սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ և 2024 թվականի հունիսի 14-ի N 898-Լ որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 1959-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի 1-ին կետում «չեն ցանկացել» բառերը փոխարինել «հրաժարվել են» բառերով, իսկ «ծրագրից» բառից հետո լրացնել «օգտվելու իրավունքից» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի 3-րդ կետում «դիմումի մեջ նշելով» բառերը փոխարինել «ներկայացնելով» բառով.

3) որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) որոշման N 2 հավելվածի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով՝

«6) որոշմամբ հաստատված ծրագրից օգտվելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն՝ համաձայն ձևի, որը ստորագրվում և կցվում է դիմումին:».

5) որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի 8-րդ ենթակետը «տվյալները» բառից հետո լրացնել «և հայտարարությունը» բառերով.

6) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ձևով՝

«Ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտնում եմ, որ հրաժարվում եմ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված Ղարաբաղից տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու իրավունքից:

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձը հաստատող փաստաթղթի համարը, սերիան	ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համարը	Համաձայն եմ դիմումում ներառված տվյալների և դրույթների հետ
1.					
2.					
3.					

Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

----- ---------- 202 թ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ